ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«17» սեպտեմբերի 2021թ. № 336

## ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ «ԲԵՐՔԻ ՏՈՆ 2021» ՄԻՋՈՑԱՌՄԱՆՆ ԱՋԱԿՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 7-րդ մասով, հաշվի առնելով Լոռու մարզպետի՝ 2021 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 01/105.4.1/07497-2021 գրությունը, Լոռու մարզային «Բերքի տոն 2021» միջոցառման կազմակերպման աշխատանքներն իրականացնելու ծախսերը հոգալուն աջակցելու նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2021 թվականի բյուջեի «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» գործառական դասակարգման «Նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման 4819 հոդվածից հատկացնել 50 000 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. սեպտեմբերի 17
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«17» սեպտեմբերի 2021թ. № 337

## ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի ԹԻՎ 52 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հաշվի առնելով, որ Սպիտակի քաղաքապետի 2005 թվականի ապրիլի 14-ի թիվ 52 որոշմանը կից ցուցակում Կիմա Ալեքսանի Դարչինյանի հայրանունը սխալմամբ գրվել է «Ալեքսոյի», հիմք ընդունելով Կիմա Ալեքսանի Դարչինյանի անձնագիրը և դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակի քաղաքապետի 2006 թվականի ապրիլի 14-ի «Սպիտակ քաղաքի Այգեստան, Ն. Աճեմյան, Սայաթ-Նովա, Կնունյանց, Ալ. Մանուկյան, Մյասնիկյան, Կամոյի, Թումանյան, Քըրք Քըրքորյան փողոցների բնակիչների տնամերձ հողամասերը և բնակելի տները՝ որպես վերջիններիս սեփականություն ճանաչելու մասին» թիվ 52 որոշմանը կից ցուցակի 46-րդ տողում նշված «Ալեքսոյի» բառը փոխարինել «Ալեքսանի» բառով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ____________________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. սեպտեմբերի 17
ք.Սպիտակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

## ՈՐՈՇՈՒՄ

«17» սեպտեմբերի 2021թ. № 338

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 30-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՇՔԵՐԹԸ ԴԻՏԵԼ ՑԱՆԿԱՑՈՂՆԵՐԻՆ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻՑ ՎԱՆԱՁՈՐ ՈՒՂԵՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 7-րդ մասով, հաշվի առնելով Լոռու մարզպետի՝ 2021 թվականի սեպտեմբերի 07-ի թիվ 01/107.4/07258-2021 գրությունը, Հայաստանի Հանրապետության անկախության 30-ամյակին նվիրված շքերթը դիտել ցանկացողներին Սպիտակ համայնքից Վանաձորի Հայքի հրապարակ ուղևորելու համար՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2021 թվականի բյուջեի «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» գործառական դասակարգման «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման 4239 հոդվածից հատկացնել 15 500 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. սեպտեմբերի 17
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«17» սեպտեմբերի 2021թ. № 339

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԹԻՎ 15 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» 596-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Արտուշ Յուրայի Դունամալյանի 2021 թվականի սեպտեմբերի 16-ի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Սպիտակ համայնքի բնակիչ Արտուշ Յուրայի Դունամալյանին 2019թ. սեպտեմբերի 17-ին տրամադրված թիվ 15 շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետը երկարաձգել 9 (ինը) ամիս:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար Գ.Չոբանյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ________________ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. սեպտեմբերի 17
ք.Սպիտակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«23» սեպտեմբերի 2021 թվականի N 340

### ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24-ԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ 12-Ն հրամանով հաստատված համայնքային ծառայության մրցութային հանձնաժողովի օրինակելի աշխատակարգի 8.4-րդ կետի՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի (ծածկագիր 1.1-1) համայնքային ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 2021 թվականի սեպտեմբերի 24-ին անցկացվող մրցույթի՝ համակարգչի միջոցով ձևավորված մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Մրցութային հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկումն իրականացնելու նպատակով լիազորված անձ նշանակել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Արմինե Թումանյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝    [signature]    Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. սեպտեմբերի 23
ք.Սպիտակ

Հավելված
Սպիտակ համայնքի ղեկավարի
2021թ. սեպտեմբերի 23-ի թիվ 340 որոշման

# ԿԱԶՄ
## ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24-ԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

| հ/հ | անունը, ազգանունը | հաստատությունը (մարմինը) | պաշտոնը |
|---|---|---|---|
| 1 | Քաջայր Նիկողոսյան | Սպիտակի համայնքապետարան | Սպիտակ համայնքի ղեկավարի պաշտոնակատար |
| 2 | Էռնեստ Խաչատրյան | Սպիտակի համայնքապետարան | Սպիտակ համայնքի ղեկավարի խորհրդական (տնտեսական զարգացման հարցերով պատասխանատու) |
| 3 | Միեր Խեչումյան | ՀՀ Լոռու մարզպետարան | Լոռու մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ |
| 4 | Նունիկ Ասրյան | ՀՀ Լոռու մարզպետարան | Լոռու մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ |
| 5 | Համլետ Պողոսյան | Սպիտակ համայնքի ավագանի | Սպիտակ համայնքի ավագանու անդամ |
| 6 | Հեղինե Պողոսյան | «Սպիտակի պետական քոլեջ» ՊՈԱԿ | դասախոս |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ____________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

*23/09/2021 11:03:49 A*
*Սպիտակի Համայնքապետարանի աշխատակազմի   քարտուղար (ծածկագիր ՝ ՍՀ-1.1-1)*

# Հանձնաժողովի կազմը

ՆՈՒՆԻԿ ԺՈՐԱՅԻ ԱՍՐՅԱՆ

*Հաստատությունը ՝* Մարզպետարան

*Պաշտոնը ՝* ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

*Այլ տվյալներ ՝* ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ԴԱՍԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ

ՄՀԵՐ ԽԵՉՈՒՄՅԱՆ

*Հաստատությունը ՝* Մարզպետարան

*Պաշտոնը ՝* ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

ՔԱՋԱՅՐ ՎՈՐՈՏԻ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

*Հաստատությունը ՝* Համայնքապետարան

*Պաշտոնը ՝* ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ԷՌՆԵՍՏ ԷԴԻԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

*Հաստատությունը ՝* Համայնքապետարան

*Պաշտոնը ՝* ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ (ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ)

ՀԵՂԻՆԵ ՎԱՌԼԱՄԻ ՊՈՂՈՍՅԱՆ

*Հաստատությունը ՝* Գիտական հաստատություններ

*Պաշտոնը ՝* «ՍՊԻՏԱԿԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ, ԴԱՍԱԽՈՍ

*Այլ տվյալներ ՝* ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՊԱՏՄԱԲԱՆ-ՄԱՆԿԱՎԱՐԺ

ՀԱՄԼԵՏ ՄՈՒԽԱԵԼԻ ՊՈՂՈՍՅԱՆ

*Հաստատությունը ՝* Ավագանի

*Պաշտոնը ՝* ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«23» սեպտեմբերի 2021 թվականի N 341

ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24-ԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ 12-Ն հրամանով հաստատված համայնքային ծառայության մրցութային հանձնաժողովի օրինակելի աշխատակարգի 8.4-րդ կետի՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի (ծածկագիր 2.1-5) համայնքային ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 2021 թվականի սեպտեմբերի 24-ին անցկացվող մրցույթի՝ համակարգչի միջոցով ձևավորված մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Մրցութային հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկումն իրականացնելու նպատակով լիազորված անձ նշանակել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Արմինե Թումանյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ________________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. սեպտեմբերի 23
ք.Սպիտակ

Հավելված
Սպիտակ համայնքի ղեկավարի
2021թ. սեպտեմբերի 23-ի թիվ 341 որոշման

# ԿԱԶՄ
## ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24-ԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

| հ/հ | անունը, ազգանունը | հաստատությունը (մարմինը) | պաշտոնը |
|---|---|---|---|
| 1 | Քաջայր Նիկողոսյան | Սպիտակի համայնքապետարան | Սպիտակ համայնքի ղեկավարի պաշտոնակատար |
| 2 | Արտակ Մաթոսյան | Սպիտակի համայնքապետարան | Սպիտակ համայնքի ղեկավարի տեղակալ |
| 3 | Միեր Խեչումյան | ՀՀ Լոռու մարզպետարան | Լոռու մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ |
| 4 | Նունիկ Ասրյան | ՀՀ Լոռու մարզպետարան | Լոռու մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ |
| 5 | Հայկ Միսակյան | Սպիտակ համայնքի ավագանի | Սպիտակ համայնքի ավագանու անդամ |
| 6 | Աիդա Ղարիբյան | «Սպիտակի թիվ 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ | տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ______________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

24/09/2021
15:00

*23/09/2021 3:21:40 PM*
*Սպիտակի Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշին., հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ (ծածկագիր՝ ՄՀ-2.1-5)*

# Հանձնաժողովի կազմը

ՄՀԵՐ ԽԵՉՈՒՄՅԱՆ
*Հաստատությունը՝* Մարզպետարան
*Պաշտոնը՝* ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

ՆՈՒՆԻԿ ԺՈՐԱՅԻ ԱՍՐՅԱՆ
*Հաստատությունը՝* Մարզպետարան
*Պաշտոնը՝* ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ
*Այլ տվյալներ՝* ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ԴԱՍԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ

ՔԱՋԱՅՐ ՎՈՐՈՏԻ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
*Հաստատությունը՝* Համայնքապետարան
*Պաշտոնը՝* ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ԱՐՏԱԿ ՎԱՆԻՉԿԱՅԻ ՄԱԹՈՍՅԱՆ
*Հաստատությունը՝* Համայնքապետարան
*Պաշտոնը՝* ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ԱԻԴԱ ԱՐԱՄԻ ՂԱՐԻԲՅԱՆ
*Հաստատությունը՝* Գիտական հաստատություններ
*Պաշտոնը՝* «ՍՊԻՏԱԿԻ ԹԻՎ 5 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ, ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ
*Այլ տվյալներ՝* ՀԱՏՈՒԿ ՄԱՆԿԱՎԱՐԺ

ՀԱՅԿ ԶԱՔԱՐԻ ՍԻՍԱԿՅԱՆ
*Հաստատությունը՝* Ավագանի
*Պաշտոնը՝* ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«23» սեպտեմբերի 2021թ. № 342

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ «ԵՎՐՈՊԱԿԱՆ ՍՊՈՐՏԻ ՇԱԲԱԹ» ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԻՆ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հաշվի առնելով Սպիտակ համայնքի ղեկավարի տեղակալ Արտակ Մաթոսյանի զեկուցագիրը, Սպիտակ համայնքում «Եվրոպական սպորտի շաբաթ» մասսայական մարզական միջոցառման կազմակերպիչներին խրախուսելու նպատակով շնորհակալագրեր, շնորհակալագրերի շրջանակներ, հուշանվերներ, նվերի տուփեր, նվերի տոպրակներ, ինչպես նաև մասնակիցների համար զովացուցիչ ըմպելիք (կվաս) և պլաստմասե բաժակներ ձեռք բերելու համար՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2021 թվականի բյուջեի «Սպորտային միջոցառումներ» գործառական դասակարգման «Ներկայացուցչական ծախսեր» տնտեսագիտական դասակարգման 4237 հոդվածից հատկացնել 81 100 ՀՀ դրամ:
2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

Համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. սեպտեմբերի 23
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ
«24» սեպտեմբերի 2021թ. № 343

# ԳՈՒՐԳԵՆ ԳԵՎՈՐԳԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲԱԺՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, 18-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 13-ի թիվ 1002-Ն որոշմամբ հաստատված «Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգի» 3-րդ կետի 3-րդ ենթակետով և 18-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալի 2021 թվականի օգոստոսի 27-ի թիվ ՎՏ/15.4/21988-20 գրությունը և Գուրգեն Գևորգի Վարդանյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Գուրգեն Գևորգի Վարդանյանին 2021 թվականի սեպտեմբերի 25-ից նշանակել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի առաջատար մասնագետի (ծածկագիր 3.1-30) համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնում և նրա հետ կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր՝ մինչև մրցույթում հաղթող ճանաչված անձին այդ պաշտոնում նշանակելը:

2. Աշխատավարձը՝ համաձայն հաստատված պաշտոնային դրույքաչափի՝ 120 000 (հարյուր քսան հազար) ՀՀ դրամ:

Աշխատավարձը համարել փոփոխված Սպիտակ համայնքի ավագանու կողմից պաշտոնային դրույքաչափի փոփոխմանը համապատասխան:

3. Աշխատանքային գործառույթները՝ համաձայն համայնքային ծառայության պաշտոնի անձնագրի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ________________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. սեպտեմբերի 24
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«24» սեպտեմբերի 2021թ. № 344

## ԻՆԳԱ ՌՈՄԱՆԻ ՊԵՏՐՈՍՈՎԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1068250 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06006EFKKYIG) և Ինգա Ռոմանի Պետրոսովայի ներկայացուցիչ՝ Մելսիդա Սարիբեկի Պետրոսովայի դիմումը ՝ ***որոշում եմ.***

1. Ինգա Ռոմանի Պետրոսովային սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Ե.Չարենցի փողոցի վրա գտնվող, 06-006-0130-0078 կադաստրային ծածկագրով, 0,031 հեկտար մակերեսով տնամերձ հողամասին տրամադրել «ք.Սպիտակ, Ե.Չարենցի փողոց, թիվ 149» հասցեն (փոստային դասիչը՝ 1803):
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ _______________ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. սեպտեմբերի 24
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«24» սեպտեմբերի 2021թ. № 345

## ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 276 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հաշվի առնելով, որ Սպիտակի քաղաքապետի 2004 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 276 որոշմանը կից ցուցակում Հովհաննես Ամիրբեկի Խոյեցյանի անունը սխալմամբ գրվել է «Վանիկ», իսկ հայրանունը սխալմամբ գրվել է «Ամրբեկի», հիմք ընդունելով Հովհաննես Ամիրբեկի Խոյեցյանի որդու՝ Ամուրիկ Հովհաննեսի Խոյեցյանի դիմումը և Հովհաննես Ամիրբեկի Խոյեցյանի մահվան մասին պետական վկայականը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակի քաղաքապետի 2004 թվականի նոյեմբերի 26-ի «Սպիտակ քաղաքի Ոփյան և Չարենցի փողոցների բնակիչների տնամերձ հողամասերը և բնակելի տները՝ որպես վերջիններիս սեփականություն ճանաչելու մասին» թիվ 276 որոշմանը կից ցուցակի 11-րդ տողում նշված «Վանիկ» բառը փոխարինել «Հովհաննես» բառով, իսկ «Ամրբեկի» բառը փոխարինել «Ամիրբեկի» բառով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ________________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. սեպտեմբերի 24
ք.Սպիտակ